HEKS EPER

ԿՈՐԻԶԱՎՈՐՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

eed Evangelischer Entwicklungsdienst

Կորիզավորների ծակոտկեն բծավորություն



Վարակվում են կորիզավորների վերգետնյա բոլոր օրգանները: Տերևների վրա վարակն արտահայտվում է կլոր բծերի տեսքով: Այն սկզբում լինում է կարմրամանուշակագույն, բաց շագանակագույն, կարմրագորշավուն, հետագայում բաց շագանակագույն բծերի ձևով, որոնք պարփակված են ավելի մուգ, կարմրաշագանակագույն երիզով: Սկզբնական շրջանում բծերը շատ մանր են: Մի քանի օրից դառնում են **3-5** մմ մեծության, իսկ **1-2** շաբաթ անց բծերի փոխարեն առաջանում են անցքեր: Վարակված տերևները մասնակի կամ լրիվ չորանում են, տերևակոթունի վարակման դեպքում նաև թափվում (հատկապես ծիրանենու և դեղձենու մոտ): Շվերի վրա առաջանում են կետանման, ապա **2-5**մմ մեծության կարմրավուն բծեր: Դրանք սկզբում լինում են կլորավուն, հետագայում երկարավուն, ավելի ուշ ճաքճքվում, ճեղքվում են: Երբեմն առաջացած վերքերից խեժահոսություն է նկատվում: Հատկապես ուժեղ են վարակվում ծիրանենու պտուղները, որոնց վրա սկզբում առաջանում են կարմրագորշավուն մանր կետանման բծեր, հետագայում բծերը մեծանում են մինչև 3մմ տրամագծով, ապա ընդունում են գորտնուկի տեսք: Ուժեղ վարակի դեպքում բծերը միաձուլվում, կեղևակալում են: Հիվանդ բողբոջները չորանում են: Ծառի վրա ավելի ուժեղ վարակվում են ներքևի հարկաբաժնի տերևները և պտուղները:



Պայքարի միջոցառումները - աշնանը տերևաթափից առաջ կտրել և այգուց դուրս այրել վարակված շվերն ու ճյուղերը: Ամեն կերպ բարձրացնել ծառերի դիմացկունությունը, ժամանակին և ճիշտ պարարտացնել: Վաղ գարնանը ծառերի բները և կմախքային ճյուղերը սպիտակեցնել կրակաթի 20%-ոց լուծույթով:

Պղինձ պարունակող պատրաստուկները (բորդոյան հեղուկ, պղնձաջասպ, պղնձի օքսիքլորիդ, կուպրոքսատ և այլն) նպատակահարմար է օգտագործել աշնանը, որն ավելի արդյունավետ է, իսկ գարնանը՝ բողբոջների ուռչման փուլում: Վեգետացիայի ընթացքում սրսկել Կուրզատ 2,5 կգ/հա (10 լ ջրին 25գր), շատ արդյունավետ է նաև Տասպա 0,3 լ/հա (10 լ ջրին 3 մլ), Սարմա 2.5 կգ/հա (10լ ջրին 25գր), Տոպազ (0,4 լ/հա, (10 լ ջրին 4 մլ.) + Սկոր (0,2 լ/հա, (10 լ ջրին 2 մլ) լուծույթների խառնուրդներով կատարվող

Ցիտոսպորոզ

Հիվանդության առաջին նշանները դիտվում են մինչև բողբոջների բացվելը կամ ծաղկման փուլում: Բողբոջներն ու ծաղիկները գորշանում են, չորանում ու մնում ծառի վրա: Տերևաբողբոջները դանդաղ են բացվում: Տերևները գունաթափվում են, արագ թառամում են և չկորցնելով գույնը մնում են ծառի վրա:

Սնկամարմինը զարգանում է բնափայտի անոթներում, խցանում դրանք, առաջ բերում խեժահոսություն, չորացնում ճյուղերը և անգամ ամբողջ ծառը:

Պայքարի միջոցառումներ - ծառերի պաշտպանել արևահարումից և ցրտահարումից, մոնիլիոզից, վնասվածքներից: Այս կամ այն պատճառով առաջացած վերքերը ժամանակին բուժել այգու քսուկով, բոլոր չորացած ճյուղերը մինչև աշուն հեռացնել այգուց և այրել:Աշնանը կամ գարնանը կատարել սրսկում բորդոյան հեղուկի 3% -անոց լուծույթով: Ծաղկումից հետո սրսկել 1%-ոց բորդոյան հեղուկ կամ Կուրզատ 2,5 կգ/հա (10 լ ջրին 25 գ) կամ Կուպրոքսատ 5 լ/հա (10 լ ջրին 50 գ) կամ Ֆունգուրան 3 կգ/հա (10 լ ջրին 30 գ) կամ Կուպրոֆլը 3 լ/հա (10 լ ջրին 30 մլ):

Վերտիցիլիոզային թառամում

Հիվանդությունը լայն տարածում ունի: Հատկապես ուժեղ են վարակվում ծիրանենու, սալորենու և կեռասենու երիտասարդ տնկիները: Վարակված ծառերի տերևները ամռան կեսին՝ հուլիսի վերջին, օգոստոսի սկզբին սկսում են դեղնել, թափվել: Սկզբում դեղնում ու թափվում են սաղարթի միջին մասի տերևները: Հետագայում հիվանդությունը տարածվում է երիտասարդ վերաճի վրա, ապա ամբողջ սաղարթի: Հարուցիչները զարգանում են միայն ջրատար անոթներում: Հիվանդության ախտորոշման համար բնորոշ է փայտանյութի նեկրոզը, որը լավ նկատելի է լայնակի կտրվածքի դեպքում: Երբեմն նեկրոզն ընդգրկում է ոչ միայն փայտանյութի տարեկան օղակները, այլև միջուկը: Նեկրոզը անցնում է նաև բնի և արմատի մեջ: Չորացումը ոչ միայն ջրատար անոթների խցանման արդյունք է, այլև սնկի կողմից արտադրվող թունավոր նյութերի հետևանք: Ծառերը այս հինադությամբ վարակվում են բոլոր հասակներում, սակայն առավել վարակընկալ են 2-5 տարեկան տնկիները:



Պայքարի միջոցառումներ - վերտիցիլյոզով վարակված բույսերի բուժումը գործնականում անհնար է: Հետևաբար կարևոր նշանակություն ունեն նախազգուշական միջոցառումները:

- այգու հիմնելը այնպիսի հողերում, որտեղ վերջին 4-5 տարում չեն մշակվել մորմազգի և դդմազգի մշակաբույսեր:
- կտրականապես արգելվում է միջշարային տարածություններում բանջար-բոստանային կուլտուրաների մշակումը:
- այգին պարարտացնել ոչ միայն ազոտական, այլև կալիումական և ֆոսֆորական պարարտանյութերով:
- կարգավորել ոռոգումը, անթույլատրելի է լճացումը, չափից ավելի ջրումը: Լավ կլինի ջրել ֆիլտրացման եղանակով, որպեսզի ծառի բունը չթրջվի, ջուր չկպչի արմատավզիկին և պատվաստի հանգույցին:
- չափազանց մեծ նշանակություն ունի հիվանդության կանխման տեսակետից կաթիլային ոռոգումը, որի նախնական փորձերը հանրապետությունում արդեն կան:

Մոնիլիոզ կամ պտղային փտում

Հիվանդությամբ վարակվում են շվերը, տերևները, ծաղիկները և պտուղները:

Ըստ արտահայտման բնույթի, տարածված են երկու հիմնական ձև՝ մոնիլիալ այրվածք և պտղային փտում:

Մոնիլյալ այրվածք – ծաղկման ժամանակ վարակվում են ծաղկաշվերը: Տերևները, ծաղիկները թառամում են, գորշանում ու չորանում են, նմանվելով այրվածի, սակայն երկար ժամանակ մնում են ծառի վրա:



Չորացած ճյուղերի, ծաղկակոթունների, տերևների, շվերի վրա խոնավ եղանակին առաջանում են մոխրագույն սպորակույտեր: Շվերի կեղևը ճաքճքում է, սկսում է խեժահոսել:

Պտղային փտում – վարակը սկսվում է պտղի վրա փոքր, փտող բծի առաջացումով: Այն արագ մեծանալով ընդգրկում է ողջ պտուղը, որի մակերեսին առաջանում են բազմաթիվ փոքրիկ մոխրագույն բարձիկներ: Պտուղը կնճռոտվում է ու չորանում:



Պայքարի միջոցառումներ - անհրաժեշտ է հավաքել, այգուց հանել և ոչնչացնել հիվանդ, մումիֆիկացած պտուղները, ծաղկումից մոտ մեկ ամիս անց կտրել, այգուց հեռացնել և այրել վարակված ընձյուղները: Աշնանը, տերևաթափի ժամանակ կամ գարնանը, մինչև բողբոջների ուռչելը, սրսկել բորդոյան հեղուկի 3% -ոց լուծույթով կամ հետևյալ պատրաստուկներից որևիցե մեկով. ֆունգուրան 3 կգ/հա (10 լ ջրին 30 գ) , Կուպրոքսատ 5 լ/հա (10 լ ջրին 50 գ), Կուպրոֆլը 3 լ/հա (10 լ ջրին 30 մլ), Բոտրան 1-1.5 կգ/հա (10լ ջրին 10-15գր), Խորուս 0.35 կգ/հա (10լ ջրին 35գր):

Կորիզավորների խեժահոսություն (գոմոզ)



Խեժահոսությունը հիմնականում կորիզավորների հիվանդություն է: Բնորոշ է բներից, շվերից խեժարտադրությամբ, որը սոսնձանման, առաձգական, դեղնակարմրագույն հեղուկ է, սառելով դառնում է թափանցիկ կամ մուգ՝ ապակենման, քաղցրահամ: Խրոնիկ խեժահոսությունը ոչ միայն թուլացնում է ծառը, նվազեցնում բերքը,այլև կարող է չորացնել առանձին ճյուղեր, երբեմն էլ ամբողջ ծառը: Հիվանդությունը և խեժարտադրությունը կարող է առաջանալ ամենատարբեր գործոնների ազդեցությամբ՝ բույսի կյանքի ու զարգացման համար անբարենպաստ պայմաններից, վնասատուների և հիվանդությունների գործունեությունից, հողի շատ բարձր կամ խիստ ցածր խոնավությունից, ոչ հաշվեկշիռ պարարտացումից և այլն:

Պայքարի միջոցառումները - խեժահոսության դեմ պայքարը հիմնականում նախազգուշական է: Կարևոր է տարբեր տեսակի մեխանիկական վնասվածքներից, արևահարությունից, ցրտաճաքերից ծառերի պաշտպանությունը: Անհրաժեշտ է ժամանակին ու ճիշտ կատարել էտն ու ձևավորումը: Չկատարել միակողմանի ազոտական պարարտացում: Այգի հիմնելիս ընտրել թեթև, լավ օդափոխվող հողեր: Անհրաժեշտ է ամեն տարի բները սպիտակացնել կրակաթի **20** %-անոց լուծույթով:

Եթե խեժահոսությունն արտահայտվել է, պետք է վերքերը մաքրել, ընդգրկելով նաև առողջ հյուսվածքներից **5-6** մմ, ապա ախտահանել պղնձարջասպի **1**%-անոց լուծույթով:

Դեղձենու տերևների գանգրոտություն



Վաղ գարնանը վարակվում են տերևները, միամյա շվերը, որոնք հիպերտրոֆիայի են ենթարկվում: Տերևները հաստ և մսալի են դառնում, չափերով շատ ավելի խոշոր առողջ տերևներից, մի տեսակ ալիքավոր, գանգուր, կարմրագորշ գույնի: Հետագայում տերևները գորշանում են, թափվում, ըստ որի շվի մերկացումը և տերևների թափվելը սկսվում է վարակված շվի հիմքի մասից, որի պատճառով էլ շիվը ստանում է վրձնի տեսք: Շիվը ձևափոխվում է, ծռմռվում, դրանց մեծ մասը մահանում է, իսկ մնացած մասը մահանում են առաջին իսկ ցրտերի ժամանակ: Վաղաժամկետ տերևաթափի պատճառով ծառը խիստ թուլանում է, վատ ձմեռում: 2-3 տարի ժամանակին ու ճիշտ պայքար չիրականացնելու դեպքում այգին կարող է ամբողջովին չորանալ:



Պայքարի միջոցառումները -Երբ գարնանը դեղձենին արդեն վարակվել է գանգրոտությամբ, արդյունավետ պայքարի իրականացումը հիվանդության դեմ գործնականում դառնում է անհնար: Այս առումով էլ գանգրոտության դեմ հիմնական պայքարը հարկ է տանել դեղձենու հանգստի փուլում: Բավականին արդյունավետ են աշնանային կամ վաղ գարնանային սրսկումները՝ մինչև բողբոջների ուռչելը, Բորդոյան հեղուկի 3%-ոց, կամ Պղնձարջասպի 5 կգ/հա 10լ ջրին 50 գր.) Պղնձի օքսիքլորիդի (4 կգ/հա, 10լ ջրին 40 գր.) լուծույթներով սրսկումները, իսկ վեգետացիայի ընթացքում հարկավոր է նույն այգին սրսկել Դելանի (0,7-1,0 կգ/հա, 10լ ջրին 7-10 գր.), Տասպաի (0.3 լ/հա, 10լ ջրին 3 մլ.), կամ Սկորի (0,4 լ/հա, 10լ ջրին 4 մլ.) լուծույթներով: Պատրաստուկները սրսկել հերթափոխով ըստ անհրաժեշտության:

Դեղձենու ալրացող



Վարակվում են տերևները, շվերը և պտուղները: Վարակված օրգանների վրա առաջանում է սպիտակ, թաղիքանման փառ: Հիվանդ շվի աճը հետ է մնում, այն ծռմռվում է, իսկ վերին մասը չորանում: Վարակված տերևները վաղաժամկետ թափվում են: Առավել մեծ ու զգալի է վնասը, երբ վարակվում են պտուղները, դրանք կորցնում են համային հատկանիշները, դառնում են վարակընկալ պտղափտման նկատմամբ: Երիտասարդ պտուղները ալրացողով ուժեղ վարակվելու դեպքում, հատկապես, երբ վարակը տեղի է ունենում վաղ փուլում, մեծամասամբ թափվում են: Ալրացողով հատկապես ուժեղ են վարակվում երիտասարդ, լավ աճող ծառերը: Հիվանդության զարգացմանը նպաստում է միակողմանի ազոտական պարարտացումը, ոռոգման ուշացումը:



Պայքարի միջոցառումները - Վաղ գարնանը անհրաժեշտ է կտրել, հեռացնել այգուց վարակված շվերը և բուսական մնացորդները: Քիմիական պայքարը պետք է կատարել ըստ անհրաժեշտության՝ Տասպաի 0.3 լ/հա (10 լ ջրին 3 մլ.) , Բայլետոնի կամ Տոպազի 0.8-1.0 կգ/լ/հա (10 լ ջրին 8-10 գ/մլ.) , Ռուբիգանի 0.6-0.8լ/հա (10 լ ջրին 6-8 մլ.) կամ էլ Ստրոբիի 0,2 կգ/հա (10 լ ջրին 2 գր.) լուծույթներով: Անհրաժեշտ է օգտագործել վերը նշված պատրաստուկները փոխեփոխ և անպայման օրվա հով ժամերին, երբ տվյալ տարածքում քամիներ չկան: Պետք է կատարել ճիշտ պարարտացում, կարգավորել այգու ոռոգման ռեժիմը:

Սալորենու գրպանիկներ



Հիվանդ պտուղները տձև են, մոխրաշագանակագույն, պարկանման, առանց կորիզի: Ամռան ընթացքում, խոնավ եղանակին պտուղների մակերեսին առաջանում են պայուսակներ՝ մոմանման, մոխրագույն շերտի ձևով: Պայուսակները նախ ձևավորվում են կուտիկուլայի տակ, հասունանալիս պատռում են այն և դուրս գալիս մակերես:



Պայքարի միջոցառումներ - Վարակված շվերը կտրել, հիվանդ պտուղները հավաքել և այրել: Աշնանը, տերևաթափից հետո, սրսկել Բորդոյան հեղուկի 3%-անոց կախույթով, իսկ վաղ գարնանը՝ բողբոջների ուռչման փուլում բորդոյան հեղուկի 1%-անոց կախույթով: Վեգետացիայի ընթացքում՝ Խորուսով 0,2 լ/հա (10լ ջրին 2մլ) կամ Սկորով 0,2 լ/հա (10լ ջրին 2մլ):

Սալորենու տերևների կարմիր բծավորություն կամ պոլիստիգմոզ

Հարուցիչը սունկ է: Հիվանդության վարակն արտահայտվում է տերևների վրա, սկզբում դեղնավուն և բաց կարմրավուն, ապա դեղնակարմրավուն բծերի ձևով: Տերևները վերևի մակերեսի կողմից մի փոքր փքված, ուռած, հակառակ երեսից մի փոքր ներս ընկած բծերի ձևով: Երբեմն տերևները այնքան ուժեղ են վարակվում, որ վաղաժամկետ թափվում են, բերքը խիստ ընկնում է, ծառերը դառնում են խիստ զգայուն ձմռան ցրտերի նկատմամբ: Հիվանդության նպաստավոր տարիներին, կարող է վարակվել նաև պտուղը, որի վրա առաջացած բծերը շատ նման են տերևի բծերին, սակայն իրենց չափերով ավելի մեծ են: Հանրապետությունում հիվանդությունը տարածված է ամենուրեք: Չնայած հիվանդությունը կոչվում է սալորենու տերևների կարմիր բծավորություն, այս հիվանդությամբ հանրապետությունում վարակվում է նաև նշենին:



Պայքարի միջոցառումներ - արդյունավետ են սանիտարահիգիենիկ միջոցառումները, թափված տերևների, պտուղների լրիվ հավաքելը, այգուց հանելն ու ոչնչացնելը: Աշնանը՝ տերևաթափից հետո, կամ գարնանը՝ կանաչ կոնի փուլում Բորդոյան հեղուկի 3% սրսկումը, գարնանը ծաղկաթերթերի թափվելուց անմիջապես հետո և դրանից 15-20 օր անց կատարել երկրորդ և երրորդ սրսկումները Բորդոյան հեղուկի 1% կամ Կուպրոկսատի 0.5%-ոց լուծույթներով:

Պատրաստել է